ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Աղավնատուն համայնք, գ.Աղավնատուն, Ն.Մաթևոսյան
Պ.25, Հեռ. 0231-6-00-75 , axavnatungp@mail.ru

N Ա-208
02 դեկտեմբեր 2013թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ուղարկվում Աղավնատուն գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 8 արտահերթ նիստի որոշումները :

Առդիր 9 թերթ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Աշոտ Գրիգորյան**

Կապ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Զոհրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, 0231-6-00 75, axavnatungp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2013թվականի N 39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ***համայնքի ավագանին որոշում է***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 5 Դեմ -0 Ձեռնպահ 0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
5. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013թ նոյեմբերի 25
գ.Աղավնատուն

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2013ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻԻ <<25>>-Ի

N 39 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N-8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ » ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

3.ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, 0231-6-00-75, axavnatungp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2013թվականի N 40-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ,,ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ ,, ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղապետարանի աշխատակազմի, «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
5. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013թ նոյեմբերի 25
գ.Աղավնատուն

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի
Աղավնատուն գյուղական
համայնքի ավագանու
2013թ.նոյեմբերի 25-ի
թիվ 8 արտահերթ նիստի
N 40-Ն որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014թ.
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

	2014թ համար հաստատված		
	Պաշտոնի անվանումը	միավոր	Պաշտոնի դրույքաչափը
1	Համայնքի ղեկավար	1	200000
2	Համ.ղեկ.տեղակալ	1	158500
	Ընդամենը	2	358500
	Գյուղապետարանի աշխատակազմ		
1	Աշխատակազմի քարտուղար (1.2.1)	1	158500
2	Գլխ. մասնագետ (2.3.1)	1	153000
3	Առաջատ.մասնագետ (3.1.1)	1	118500
4	Առաջատ.մասնագետ (3.1.2)	1	118500
5	I-ին կարգի մասնագետ (3.2.1)	1	107000
6	I-ին կարգի մասնագետ (3.2.2)	1	107000
7	II-րդ կարգի մասնագետ (3.3.1)	1	106000
	Ընդամենը	7	868500
	Տեխնիկական սպասարկող անձնակազմ		
1	Այգեպան	1	59524
2	Վարորդ	1	103000
3	Գործավարուհի -քարտուղարուհի	1	84000
4	Հավաքարար	1	60000
	Ընդամենը	4	306524
	Ամբողջը	13	1533524

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի
Աղավնատուն գյուղական
համայնքի ավագանու
2013թ. նոյեմբերի 25-ի
թիվ 8 արտահերթ նիստի
N 40-Ն որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ »ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

	2014թհամար հաստատված		
	Պաշտոնի անվանումը	միավոր	Պաշտոնի դրույքաչափը
1	Տնօրեն	1	83500
2	Գրադ.վարիչ	1	66000
3	Գլխ.հաշվապահ	1	65000
4	Գեղմասվար	1	60500
5	հրահանգիչ-խմբավար	1	59524
6	Պահակ	2	146400
7	Մասն.մեխանիկ	1	59524
8	Օժանդակ բանվոր	1	59524
9	Հավաքարար	1	59524
	Ընդամենը	10	659496

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, 0231-6-00-75, axavnatungp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2013թվականի N 41-Ն

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղական համայնքի վարչական տարածքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
5. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013թ նոյեմբերի 25
գ.Աղավնատուն

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻԻ <<25>>-Ի
N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ /տաս հազար դրամ/.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ՝ /տասնհինգ հազար դրամ/.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ՝ /քսան հինգ հազար դրամ/.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ, /երեսուն հազար դրամ/.

դ.3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ./մեկ հազար դրամ/.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ./ երկու հազար դրամ/.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ /մեկ հազար դրամ/.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության

փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է, միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների բանման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ /երկուհազար դրամ/:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ. /երկու հազար հինգ հարյուր դրամ/.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2500 դրամ. /երկու հազար հինգ հարյուր դրամ/.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է, յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ /երեք հարյուր հիսուն դրամ/՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքըընթացիկ տարվա համար սահմանվում է, 150 000 դրամ. /մեկ հարյուր հիսուն հազար դրամ/.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է, 30 000 դրամ /երեսուն հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500 դրամ/ երկու հազար հինգ հարյուր դրամ/

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ / մեկ հազար դրամ/.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է, յուրաքանչյուր տարվա համար 50000 դրամ /հիսուն հազար դրամ/:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 35000 դրամ /երեսուն հինգ հազար դրամ/.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000դրամ /հիսուն հազար դրամ/.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ /երկու հարյուր հազար դրամ/.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ /հինգ հարյուր հազար դրամ/.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000/ երկու հարյուր հիսուն հազար դրամ/.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000դրամ /մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ /երկու հազար դրամ/.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ /-երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ /մեկ հազար դրամ/.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ /յոթ հարյուր դրամ/:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է. 1000 դրամ /մեկ հազար դրամ: Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է. 50 000դրամ/ հիսուն հազար դրամ/:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է. 5000 դրամ /հինգ հազար դրամ/:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ /մեկ հազար դրամ/.

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար1000 դրամ /մեկ հազար դրամ/.

13. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 3000 դրամ /երեքհազար դրամ/.

14. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝0 դրամ/զերո դրամ/.

15. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար ամայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար 0 դրամ/զերո դրամ/.

16. Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը վարձակալության տրամադրելու դեպքում վարձավճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

Գյուղատնտեսական նշանակության հողեր (մեկ հեկտարի հաշվով)՝

1)Մերձարաքսյան գոտում 30000 դրամ /երեսուն հազար դրամ/.

2)Ուրց-Կոտայք, Շամիրամ գոտում 20000 դրամ /քսան հազար դրամ/

3) Արոտներ՝ 1000 դրամ /մեկ հազար դրամ/

17. Բնակավայրի և արտադրական նշանակության հողեր 52800 դրամ / հիսուն երկու հազար ութ հարյուր դրամ/: